ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Երիտասարդաց կենտրոնը (ՀԱԵԵԿ) կազմակերպեց երկօրյա ուխտագնացություն դեպի Հաղպատավանք: Երևանի մի շարք բուհերի ուսանողներ ապրիլի 1-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում աղոթք բարձրացնելուց հետո ուղևորվեցին Գուգարաց թեմ:

Ի տարբերություն նախորդ ուխտագնացությունների՝ այս անգամ ուխտագնացությունը կրում էր նաև բարեգործական բնույթ: Ուտագնացության ընթացքին ՀԱԵԵԿ-ը, «Հայ Ձմեռ պապ» բարեգործական հիմնադրամի համագործակցությամբ, կազմակերպել էր բարեգործական ակցիա, որի շրջանակում երիտասարդները այցելեցին Սպիտակի Նալբանդ գյուղում բնակվող մի կարիքավոր ընտանիքի:

Այնուհետև ուխտավորները եղան Սպիտակի Ս. Աստվածածին եկեղեցում, ապա մեկնեցին Վանաձոր: Վանաձորում նրանց դիմավորեց և ողջույնի խոսք ասաց Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը: Սրբազան Հոր օրհնությունն ստանալուց հետո ուխտավորները շարժվեցին Հաղպատավանք, ուր հյուրընկալվեցին Գուգարաց թեմի փոխառաջնորդ Տ. Արտակ վարդապետ Տիգրանյանի կողմից:

Ուխտավոր երիտասարդները մեկ օր մնացին Հաղպատում, ծրագրեցին ապագայում մի շարք նախաձեռնություններով նպաստել տեղի հոգևոր հովվի գործունեությանը:

Հաջորդ օրը ուխտավորները արևածագը դիմավորեցին Դսեվանքում, եղան նաև Սանահինում:

*

* *

Ապրիլի 13-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու երիտասարդաց կենտրոնի ջանքերով կազմակերպվել էր ուխտագնացություն մի շարք բուհերի՝ Երևանի պետական համալսարանի, Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի, Կինոյի և թատրոնի ինստիտուտի, «Գալիք» համալսարանի, «Գլաձոր» համալսարանի շուրջ 150 ուսանողների մասնակցությամբ:

Ուխտավորները սկզբում այցելեցին Գոշավանք, ապա՝ Հաղարծին: Հետդարձի ճանապարհին նրանք կանգ առան Սևանի թերակղզում, ուր հանդիպում ունեցան Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի սաների հետ:

Այնուհետև երիտասարդները հավաքական աղոթք կատարեցին Սևանի Ս. Առաքելոց եկեղեցում, ապա նրանց մասնակցությամբ տեղի ունեցավ մկրտության արարողություն: Արարողության ավարտին Տ. Մինաս քահանա Մարտիրոսյանն իր պատգամն ուղղեց ուխտավոր ուսանողությանը:

*

* *

Ապրիլի 25-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Երիտասարդաց կենտրոնը կազմակերպել էր ուխտագնացություն, որին մասնակցում էին Երևանի մի շարք համալսարանների (Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկա-

վարժական համալսարան, Երևանի տնտեսագիտական համալսարան, «Գլաձոր» համալսարան, «Հյուսիսային» համալսարան, «Ինտերլինգվա» համալսարան, Գեղեցիկ արվեստների համալսարան և այլն) ուսանողներ և դասախոսներ:

Առաջին հանգրվանը Խոր Վիրապի վանքն էր, ուր ուխտավորները միասնաբար աղոթեցին Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում: Այնուհետև մեկնեցին Նորավանք, որտեղ նրանց դիմավորեցին և ողջունեցին ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Գերաշնորհ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը և Նորավանքի հոգևոր հովիվ Տ. Սահակ քահանա Մարտիրոսյանը: Տ. Սահակ քահանան ուխտավորներին հանգամանորեն ներկայացրեց Նորավանքի պատմությունը:

Երիտասարդները Նորավանքում ևս իրենց աղոթքը կատարեցին Հայրենիքի խաղաղության, Եկեղեցու պայծառության և հայ ժողովրդի բարօրության համար:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ
ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՕԶՆԵՑԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇԻՐԻՄԻՆ

Ուխտագնացությունը երկրից դեպի Աստված հոգևոր ճամփորդություն է՝ միջնորդված այն սրբավայրերով, որոնք մեծ ուժականությամբ ու բուժիչ հատկություններով իրենց են ձգում ուխտավոր հավատացյալին:

Ապրիլի 17-ին Գուգարաց թեմի առաջնորդարանը, թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի օրհնությամբ և առաջնորդությամբ, կազմակերպել էր ուխտագնացություն դեպի Օձուն՝ ի հիշատակ Սուրբ Հովհան Օձնեցի կաթողիկոսի վախճանման 1280-ամյակի: Այս տարի ուխտագնացությանը մասնակցեցին Սպիտակի վարժարանների ուսանողները՝ Տ. Ավետիք աբդ. Սողոմոնյանի գլխավորությամբ, Արևաշողի բարձր դասարանների աշակերտները՝ Տ. Մովսես քհն. Աշուրյանի գլխավորությամբ, Ալավերդու ուսանողները՝ Տ. Միքայել քհն. Շաղոյանի գլխավորությամբ, Ստեփանավանի ուսանողները՝ Տ. Վռամ աբդ. Ղազարյանի գլխավորությամբ: Վանաձորից մասնակցում էին Եկեղեցասեր երիտասարդաց միության անդամներ, «Ստեղծենք հնարավորություններ խուլերի համար» թեմական ծրագրի շահառուներ, Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու երգչախումբը՝ Տ. Ստեփանոս քհն. Մարգարյանի և Տ. Վահան քհն. Ազարյանի գլխավորությամբ: ՎՊՄԻ-ի ռեկտոր տիար Գուրգեն Խաչատրյանի գլխավորությամբ ուխտագնացությանը մասնակցեցին թվով 60 ուսանողներ և դասախոսներ:

Օձունի Սուրբ Աստվածածին եկեղեցում համայնքի հովիվ Արժանապատիվ Տ. Վրթանես քհն. Բաղալյանը մատուցեց Սուրբ Պատարագ: Հավարտ Պատարագի մատուցվեց ավանդական մատաղ:

Պատարագից հետո ուխտավորները մեկնեցին Արդվի, ուր ամփոփված է Սուրբ Հովհան Օձնեցու աճյունը, որտեղ կատարվեց երկրպագություն Սրբի շիրիմին, ուր և ուխտավորներին օրհնության խոսքով դիմեց Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ